1) կենտրոնն ստացված ահազանգի վերաբերյալ կազմում է արձանագրություն, եթե առկա են հետևյալ տեղեկությունները՝

ա. Պատվիրատուի անվանումը,

բ. գնման ընթացակարգի ծածկագիրը կամ առարկան,

գ. գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման առարկան,

դ. ահազանգողի անունը (անվանումը), եթե այն հայտնի է.

2) կենտրոնի պետի հանձնարարականով կենտրոնի պաշտոնատար անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հեռախոսակապ է հաստատում տվյալ ընթացակարգի գնումների համակարգողի, իսկ անհնարինության դեպքում՝ Պատվիրատուի ղեկավարի կամ աշխատակազմի ղեկավարի հետ և վերջինիս տեղեկացնում է ստացված ահազանգի վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնում է Պատվիրատուի կողմից կենտրոնին ներկայացվելիք անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Կենտրոնն ստացված ահազանգի, ինչպես նաև ներկայացվելիք փաստաթղթերի ցանկի վերաբերյալ սույն ենթակետով նախատեսված ժամկետում ծանուցում է նաև էլեկտրոնային փոստով՝ Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային հասցեի առկայության դեպքում.

3) Պատվիրատուն մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով սկանավորված տարբերակով կենտրոնին է տրամադրում պահանջված փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև ստացված ահազանգի վերաբերյալ Պատվիրատուի գրավոր կարծիքը.

4) եթե Պատվիրատուի կողմից ընդունվում է կատարված խախտումը և վերջինս համաձայնում անմիջապես վերացնել այն, ապա արձանագրված խախտման և դրա վերացման մասին տեղեկատվությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է կենտրոնին.

5) եթե Պատվիրատուն գտնում է, որ ահազանգված խախտման առկա չէ, ապա՝

ա. մեկ աշխատանքային օրվա ընթացքում կենտրոն է ներկայացնում գրավոր հավաստում խախտման բացակայության մասին, ինչպես նաև՝ տվյալ գնման ընթացակարգին վերաբերող պահանջված փաստաթղթերի պատճենները,

բ. պահանջվող տեղեկատվությունը և փաստաթղթերի պատճեններն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում կենտրոնում հրավիրվում է ֆննարկում, որին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ կողմերը,

գ. հրավիրված ֆննարկման վերաբերյալ կազմվում է արձանագրություն,

դ. ֆննարկման արդյունքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտում արձանագրվելու դեպքում, կենտրոնի պետի հանձնարարականով, կենտրոնը բողոքարկման գործընթաց է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում,

ե. կենտրոնի կողմից բողոքարկման խորհուրդ բողոքը ներկայացվում է գրավոր՝ կենտրոնի պետի կողմից, որում ներառվում են Պատվիրատուի անվանումը և գտնվելու վայրը, բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան, կենտրոնի կողմից

արձանագրված խախտման առարկան և պահանջը, ահազանգող անձի պահանջը (եթե նման պահանջ առկա է), բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները, այլ անհրաժեշտ տեղեկությունները:

6) կենտրոնի կողմից բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքը բնական է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և գնումների բողոքարկման խորհրդի գործունեության կարգով սահմանված ընթացակարգով:

12.2 Գնումների, այդ թվում բողոքարկումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ֆազաբացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

12.3 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի Օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու Պատվիրատուի և հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին՝ դիմում ներկայացնելով՝ <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ին աշխատանքային օրերին և ժամերին, ֆ. Երևան, Կոմիտասի 54/բ, 115 սենյակ հասցեով,

2) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, Պատվիրատուի և հանձնաժողովի որոշումները:

12.4 Խորհրդին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝

1) բողոքը ներկայացրած անձի անունը (անվանումը) և հասցեն.

2) Պատվիրատուի անվանումը և հասցեն.

3) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.

4) վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը, ընդ որում՝ բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար դրամ, որը պետք է փոխանցվի <<Հայէկոնոմբանկի Արաբկիրի>> մ/ն, Հ/Հ 163058100971 <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հաշվեհամարին: Լիազոր մարմնի և գնումների աջակցման կենտրոնի կողմից գնումների բողոքարկման խորհրդում բողոքարկման գործընթաց նախաձեռնվելու դեպքում բողոքարկման համար վճար չի կատարվում:

7) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

12.5 Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը կարող է ներկայացվել միայն սույն մասի 8.9 կետով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

12.6 Եթե բողոքը չի բավարարում Օրենքի 48-րդ հոդվածի պահանջներին, ապա գնումների աջակցման կենտրոնը խորհրդի անունից այդ մասին տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու հնգօրյա ժամկետ:

12.7 Բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, Պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա գտնվելու խորհրդի նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

12.7.1 Բողոքի վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացներում գնումների բողոքարկման խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ներկայացուցիչը:

12.8 Բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքը ստանալու օրվանից ոչ ութ, բայց ամեն օրացուցային օրվա ընթացքում: Խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

12.9 Խորհուրդն իրավունք ունի ընդունել հետևյալ որոշումները՝

1) որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում՝ գնումների ընթացակարգը կամ Պատվիրատուի, հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելու ուղղված միջոցներ.

2) դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում Պատվիրատուի կամ հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ, այդ թվում՝ սույն մասի 8.9 կետով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը.

3) չեղյալ հայտարարելու կնքված պայմանագիրը՝

ա. եթե Պատվիրատուն պայմանագիրը կնքել է առանց Օրենքի պահանջների համաձայն պայմանագրի մասին ծանուցում հրապարակելու,

բ. Օրենքի 9-րդ հոդվածի կամ սույն մասի 12.17 կետի պահանջները խախտելու դեպքում, եթե նման խախտումը գրկել է ռաիադրգիո մասնակցին նախան պայմանագրի կնքումն իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից, և եթե նման խախտումը համադրված է պետական գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ պահանջների խախտման հետ, և եթե վերջին խախտումն ազդել է պայմանագրի կնքելու ռաիադրգիո մասնակցի հնարավորությունների վրա:

4) եթե, սույն մասի 12.6 կետի պահանջներին հակառակ, հանձնաժողովը բոլոր համապատասխան փաստերը բնկելուց հետո գտնում է, որ ընդհանուր գերակա ռաիերը պահանջում են ուժի մեջ բողնել պայմանագրերը, ապա կիրառում է այլընտրանաային պատժամիջոցներ՝

ա. պայմանագրի կատարման սահմանափակումը՝ դրա կատարման ժամկետը կրճատելու միջոցով, և (կամ)

բ. Պատվիրատուի հանդեպ պայմանագրի գնի առավելագույնը 10 տոկոսի չափով սուժանքի կիրառում:

5) բոլոր այն դեպքերում, երբ սույն մասի 3-րդ ենթակետով նախատեսված չեղյալ հայտարարելու պատժամիջոցը չի կարող ունենալ հետագարձ ուժ (հանի որ առհնար է վերացնել կատարված պայմանագրային պարտավորությունները), հանձնաժողովը, ի հավելումն, կիրառում է սույն մասի կետի 4-րդ ենթակետի «ա» մասով նախատեսված պատժամիջոցը:

6) հայտարարելու Պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագրեր կնքելուց հետո: Նման որոշումը հիմք է հանդիսանում դատական կարգով ներկայացվելիք վնասի փոխհատուցման հայցի համար:

7) որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

12.10 Գնումների բողոհարկման խորհրդի կողմից բողոհը բավարարվելու դեպքում Պատվիրատուն պատասխանատվություն է կրում բողոհը ներկայացրած անձին պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասի հատուցման համար:

12.11 Բողոհի բանավոր բնությունը բաց է հանրության համար և բողոհը ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում այդ մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում:

12.12 Յուրաքանչյուր անձ, որի ռաիերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոհարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոհարկման ընթացակարգին՝ մինչև բողոհի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոհարկման խորհուրդ ներկայացնելով համանման բողոհ: Օրենքի 48-րդ հոդվածի համաձայն բողոհարկման ընթացակարգին չմասնակցած անձը գրկվում է գնումների բողոհարկման խորհուրդ համանման բողոհ ներկայացնելու իրավունքից:

12.13 Գնումների բողոհարկման խորհրդի որոշումն այն կայացնելու օրվանից՝ 5 օրացուցային օրվա ընթացքում, հրապարակվում է տեղեկագրում և ուղարկվում է Պատվիրատուին, լիազորված մարմին ու բողոհարկման ընթացակարգում ներգրավված կողմերին:

12.14 Յուրաքանչյուր անձ, որը ռաիադրգոված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել Պատվիրատուի, հանձնաժողովի կամ գնումների բողոհարկման խորհրդի կողմից կատարած խախտման հետևանքով, իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում:

12.15 Խորհուրդը կայացնում է բողոհը ներկայացրած անձի պահանջած ժամանակավոր միջոցը կիրառելու մասին որոշում, եթե նման միջոցը պատշաճ և անհրաժեշտ է ալնկալվող վնասը մինչև բողոհի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը կանխելու համար:

12.16 Խորհուրդը հաշվի է առնում ժամանակավոր միջոցի հնարավոր հետևանքները բոլոր այն ռաիերի, այդ թվում՝ հանրային ռաիի համար, որոնք կրելու են վնասներ, և կարող է կայացնել նման միջոց չկիրառելու մասին որոշում, եթե դրա բացասական հետևանքները կարող են գերազանցել օգուտը: Ժամանակավոր միջոց չկիրառելու մասին որոշումը չի կարող ազդել նման միջոցի դիմած անձի որևէ այլ հայցի վրա:

12.17 Բողոհը ինքնաբերաբար չի կասեցնում պայմանագրի կնքման ընթացակարգը, սակայն մինչև խորհրդի կողմից սույն հրավերի 12.15-րդ կամ 12.16-րդ կետերով նախատեսված որոշման ընդունումը Պատվիրատուն իրավունք չունի պայմանագրի կնքելու:

ՄԱՍ II

ՀՐԱՀԱՆԳ

ՇՐՋԱՆԱԿԱԹԻՆ ՀԱՄԱԶԱԹՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ
ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱԹՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել Մասնակիցներին հայտը պատրաստելիս:

1.2 Նպատակահարմարության դեպքում Մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերայմանները:

1.3 Հայտերը (ներառվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ սույն հրահանգի 3.2 կետում նշված դեպքերի) պետք է կազմված լինեն հայերեն:

Գնումների բազային միավորի հիսնապատիկը գերազանցող գնումների դեպքում, (եթե նախատեսվում է սույն հրավերով) հայտերը հայերենից բացի կարող են ներկայացվել նաև անգլերեն և (կամ) ռուսերեն:

2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏՆԸ

2.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել հայտ:

Հայտը սույն հրավերով նախատեսված կարգով սույն ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող անձի կողմից նախապատրաստված և Պատվիրատուին ներկայացված գնման առարկայի վերաբերյալ առաջարկն է, որը ներկայացվում է ընթացակարգին մասնակցելու դիմումով՝ (Հավելված 1), որում պարտադիր է նշել Մասնակցի հարկ վճարողի հաշվառման համարը, էլեկտրոնային փոստի հասցեն:

2.2 Մասնակիցները հայտով ներկայացնում են՝

2.2.1 <<Մասնակցության իրավունք>> չափանիշի՝ սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարություն իր իսկ կողմից հաստատված՝ ստորագրված և կնքված այն մասին, որ Մասնակիցը՝

1) դատական կարգով սնանկ հանաչված չէ,

2) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) որի գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենսով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) ներառված չի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

5) չունի գերիշխող դիրքի չարաճախում և հակամրցակցային համաձայնություն:

Նշված հայտարարության առաջարկվող ձևը և դրա նկատմամբ առաջադրվող պահանջները ներկայացված են սույն հրավերի N 2 հավելվածում:

Եթե Մասնակիցը հայտով ներկայացրել է սույն կետով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին: Բացի հայտարարությունից, սույն կետով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով Մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապացուցվել է Մասնակցի՝ գնումների գործընթացում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաճախման դրսևորման փաստը, ապա տվյալ Մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.2.2 Հայտարարություն՝ մասնագիտական փորձառության մասին

1) (Հավելված 3.2) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին, այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող¹⁰:

3) Գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են սույն հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները հետևյալն են՝ շինանյութի մատակարարում:

¹⁰ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն գերազանցում է գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա չի հանդիսանում անհրաժեշտ գույքը, ապա սույն կետը հրավերից հանվում է:

Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ Մասնակցի:

2.2.4 Հայտարարություն (Հավելված N 3.3) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին, այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող:

2.2.5 Հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.5) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին, այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող¹¹:

2.2.6 Հայտարարություն (Հավելված N 3.6) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին, այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող:

2.2.7 գնային առաջարկ, որը ներկայացվում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում (Հավելված N 4),

2.2.8 Հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացվում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը (Հավելված N 4.1),

2.2.9 Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք մատակարարելու դեպքում՝ հաստատված հայտարարություն դրա վերաբերյալ (Հավելված N 4.2)¹²,

2.2.10 գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրը իրականացվելու է գործակալության միջոցով.

2.2.11 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե Մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով)¹³:

3. ԱՌԱՋԻՆ ՏԵՂԸ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

3.1 Սույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստելու և սույն հրավերի 1-ին մասի 4.3 կետով նախատեսված տեղեկատվությունը տրամադրելու համար առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում սույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է

ա) առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը.

3.3 Հայտում ներառված բոլոր կնքված փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն կնքողի կողմից:

3.4 Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նուստարկան կարգով վավերացված օրինակները:

4. ՀԱՅՏԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ

4.1 Առաջարկվող գինը ապրանքների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, որի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

¹¹ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանին լրացման կարգի համաձայն գերազանցում է գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա չի հանդիսանում անհրաժեշտ գույքը, ապա սույն ենթակետը հրավերից հանվում է:

¹² Մասնակիցը սույն կետով նախատեսված հայտարարությունը հայտով ներկայացնում է, եթե առաջարկում է մատակարարել Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:

¹³ Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող Մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից, բացառությամբ սրտկաթնաման չափանիշներին վերաբերող փաստաթղթերի, որոնք հաստատվում են կոնսորցիումի առանձին անդամների կողմից՝ համաձայն կոնսորցիումի պայմանագրով սվյալ անդամի ստանձնած պարտավորության:

4.2 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինֆորմացիա, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինֆորմացիա բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Հնդ որում՝

ա. Մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման,

բ. գնման առարկաների գծով գնային առաջարկների գնահատման և համեմատման ընթացքում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ առաջարկող Մասնակիցներն ունեն մինչև 15 տոկոս գնային առավելություն:¹⁴:

4.3 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ քվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով¹⁵:

5. ՀԱՅՏԵՐԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Հայտը փաստաթղթային ձևով ներկայացնելու դեպքում Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը ստանձնվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը, ինչպես նաև սույն հրավերի 2-րդ մասի՝ հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը /տեղեկություններ/, կազմվում են բնօրինակից /բացառությամբ 3-րդ կողմի կողմից տրամադրված կամ հաստատված փաստաթղթերի, որոնց դեպքում ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և 3 օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են <<բնօրինակ>> և <<պատճեն>> բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ Մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

5.2 Սույն հրահանգի 5.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմվում է հետևյալ կերպով՝

ա) Պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

բ) շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի ծածկագիրը.

գ) <<չբացել մինչև հայտերի բացման նիստը>> բառերը.

դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

5.3 Սույն հրահանգի 5.1 և 5.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

¹⁴ Եթե գնման հայտով ներկայացված տվյալ գնման առարկայի պահանջվող բանակի և առավելագույն գների արտադրողը գերազանցում է գնումների բաղադրիչ միավորի 70-ապատիկը, ապա սույն ենթակետը հրավերից հանվում է: Հնդ որում, գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում գնման առարկայի պահանջվող բանակի և առավելագույն գների արտադրողը հաշվարկվում է ըստ չափաբաժինների:

¹⁵ Սույն կետը սահմանվում է հրավերով, եթե պայմանագրի գինը կայուն է:

<<ՎՊՀ-ՇՀԱՊԶԲ-15/7-16/12>> ծածկագրով

երջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

Դ Ի Մ ՈՒ Մ

Շ Ր Զ Ա Ն Ա Կ Ա Յ Ի Ն Հ Ա Մ Ա Զ Ա Յ Ն Ա Գ Ր Ե Ր Ի Մ Ի Զ Ո Ց Ո Վ Գ Ն ՈՒ Մ Կ Ա Տ Ա Ր Ե Լ ՈՒ Հ Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ Ի Ն Մ Ա Ս Ն Ա Կ Ց Ե Լ ՈՒ

_____ հայտնում է, որ ցանկությամբ ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

<<Վանաձորի Պետական Համալսարան>> ՊՈԱԿ-ի կողմից << ՎՊՀ-ՇՀԱՊԶԲ-15/7-16/12>> ծածկագրով հայտարարված
երջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի

..... չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին
չափաբաժնի (չափաբաժիններին) համարը

համապատասխան ներկայացնում է հայտը և համաձայն է սույն հրավերի 7.5 կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումը և
դրա հետ կապված՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գործողություններն իրականացնելու համար:

_____ -ն հայտնում և հավաստում է, որ.
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

1. իր հիմնադրի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների
միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

- 1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
- 2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի.

2. հանդիսանում է ռեզիդենտ,
Երկրի անվանումը

3. իր կողմից հայտով առաջարկվող՝ չափաբաժնում (չափաբաժիններում) նշված
նշվում է չափաբաժնի համարը

ապրանք (ապրանքները) հանդիսանում է (են) արտադրության ապրանք (ապրանքներ):
Երկրի անվանումը

_____ -ի հարկ վճարողի հաշվառման համարն է՝ <<Մասնակցի հարկ վճարողի

Հնրացական անվանումը (անունը)

հաշվառման համար >>:

_____ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ <<Մասնակցի էլեկտրոնային փոստի

Հնրացական անվանումը (անունը)

հասցե >>:

_____ Մասնակցի անվանումը (անունը) (զեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

_____ (ստորագրությունը)

Կ. Տ.

<< ՎՊՀ-ՇՀԱՊԶԲ-15/7-16/12>> ծածկագրով

երջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՇՐՋԱՆԱԿԱԹԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ԻՐ ՏՎԹԱՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

_____ -ն հայտնում և հավաստում է, որ

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

<< ՎՊՀ-ՇՀԱՊԶԲ-15/7-16/12>> ծածկագրով երջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ.

1) դատական կարգով սնանկ հռնաչված չէ,

2) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) << _____ >>-ի գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) << _____ >>-ն ներառված չի գնումների գործընթացին

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

5) բացակայում է գերիշխող դիրքի չարաժառանգ և հակամրցակցային համաձայնություն,

Մասնակցի անվանումը (անունը) (զեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

*Նախապես լրացվում է պատվիրատուի կողմից՝ հրավերով:

Հավելված 3.2¹⁶

<< ՎՊՀ-ՇՀԱՊԶԲ-15/7-16/12>> ծածկագրով

երջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒԹ Յ ՈՒՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույնով _____-ն << ՎՊՀ-ՇՀԱՊԶԲ-15/7-16/12>> ծածկագրով

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

երջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի երջանակներում հայտնում և հավաստում
է, որ ունի համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

¹⁶ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն գերազանցում է գնումների բազային միավորի
հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա չի հանդիսանում տնտրված գույքը, ապա սույն հավելվածը հրավերից հանվում է:

*Նախապես լրացվում է պատվիրատուի կողմից՝ հրավերով:

Հավելված 3.3

<< ՎՊՀ-ՇՀԱՊԶԲ-15/7-16/12>> ծածկագրով

Երջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒԹ Յ ՈՒՆ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով _____-ն << ՎՊՀ-ՇՀԱՊԶԲ-15/7-16/12>> ծածկագրով

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

Երջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի Երջանակներում հայտնում և հավաստում է, որ կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և այդ տեխնիկական միջոցներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

Մանուկի անվանումը (անունը) (զեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

<< ՎՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/7-16/12>> ծածկագրով

երջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Սույնով _____-ն << ՎՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/7-16/12>> ծածկագրով
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

երջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի երջանակներում հայտնում և
հավաստում է, որ կազմակերպությունն ունի կնիքով պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական
միջոցներ և այդ ֆինանսական միջոցներով հնարավոր է ապահովել կնիքով գործարքով նախատեսված
պարտավորությունների պատշաճ կատարումը:

Մասնակցի անվանումը (անունը) (զեկավարի պաշտոնը, Անուհ Ազգամուսնը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

<< ՎՊՀ-ՇՀԱՊԶԲ-15/7-16/12>> ծածկագրով

ժրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով _____-ն << ՎՊՀ-ՇՀԱՊԶԲ-15/7-16/12>> ծածկագրով

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

ժրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի ժրջանակներում հայտարարում և հավաստում է, որ կազմակերպությունն ունի կոնֆլիկտ պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներ և այդ աշխատանքային ռեսուրսներով հնարավոր է ապահովել կոնֆլիկտ գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

<< ՎՊՀ-ՇՀԱՊԶԲ-15/7-16/12>> ծածկագրով

Երջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

Գ Ն Ի Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված << ՎՊՀ-ՇՀԱՊԶԲ-15/7-16/12>> ծածկագրով Երջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,

_____ -ն առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հետևյալ գներով.

(ՀՀ դրամ)					
Զափա- րածիներ համարները	Ապրանքի անվանումը	Ինքնաթիվ	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5	6=3+4+5
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>				
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>				
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>				
...	...				
...	...				

***Նթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա սվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 5-րդ սյունակում:**

Մասնակցի անվանումը (անունը) (զեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

*Հախտպես լրացվում է պատվիրատուի կողմից՝ հրավերով:

Հավելված 4.1

<< ՎՊՀ-ՇՀԱՊԶԲ-15/7-16/12>> ծածկագրով

երջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

ՀԱԹՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ՝ ՀՐԱՎԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԵՆԻԹԱԳՐԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐԾԱԼ

Սույնով -----ն հայտարարում և հավաստում է, որ

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

<< ՎՊՀ-ՇՀԱՊԶԲ-15/7-16/12>> ծածկագրով *երջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի*
երջանակներում իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող՝ (նշում է չափաբաժնի համարը) չափաբաժնում (չափաբաժիններում) նշված
ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագիրը համապատասխանում է (են) <<--- ---/--->> ծածկագրով ընթացակարգի հրավերով
նախատեսված ապրանքների (ապրանքների) տեխնիկական բնութագրերին:

Ընդ որում՝ 1-ին տեղը զբաղեցրած մասնակցից հաճաչվելու դեպքում պարտավորվում է ներկայացնել իր կողմից

հաստատված՝ հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Կ. Տ.

**Հախապես լրացվում է պատվիրատուի կողմից՝ հրավերով:*

Հավելված 4.2

<< ՎՊՀ-ՇՀԱՊԶԲ-15/7-16/12>> ծածկագրով

երջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒԹ Յ ՈՒՆ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ
ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԹԱԼ

Սույնով ----- -ն հայտարարում և հավաստում է, որ

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

<< ՎՊՀ-ՇՀԱՊԶԲ-15/7-16/12>> ծածկագրով երջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի
երջանակներում իր կողմից հայտով առաջարկվող՝ (նշում է չափաբաժնի համարը) չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքներ
(ապրանքները) հանդիսանում է (են) Եվրասիական տնտեսական միության անդան երկրների արտադրության ապրանք:

Ընդ որում ընտրված մասնակից նախաձեռնում և պայմանագիր կնքվելու դեպքում ապրանքի յուրաքանչյուր խմբաճանապարհի մատակարարման ժամանակ Պատվիրատուին պետք է ներկայացվի նաև տվյալ խմբաճանապարհի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը:

Մասնակցի անվանումը (անունը) (զեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

*Նախապես լրացվում է պատվիրատուի կողմից՝ հրավերով:

Հավելված 5

<< Վ ՊՀ-ՇՀԱ ՊԶԲ-15/7-16/12>> ծածկագրով

երջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

Կից Ձեզ եմ ներկայացնում _____-ի՝ << ՎՊՀ-ՇՀԱՊՀԲ-15/7-16/12>>

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու հրավերով
նախատեսված՝ առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Մասնակցի անվանումը (անունը) (զեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

չբջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<Պայմանագրի ծածկագիր>>

Բ. Երևան

<< >> << >> 20 թ.

< _____ > -ն, ի դեմս _____ յանի, որը գործում է << >> հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և << _____ >> -ն, ի դեմս տնօրեն _____ յանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված _____ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են ---- օրից ավելի:

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագրի կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ---- օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի ֆանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լինե՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմանագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ _____
(_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

